«Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ կողմից ՀՀ Սյունիքի մարզի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24.10.2022թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2022 թվականի հոկտեմբերի 20-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ կողմից ՀՀ Սյունիքի մարզի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ տնօրեն՝ Ա" Կարապետյանը, «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ գլխավոր ճարատարագետ՝ Ս" Առստամյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Նա նշեց, որ «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ-ի կողմից 2022թ"-ի հոկտեմբերի 3-ին ստացվել է գրություն ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք բնակավայրի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումն անցկացնելու մասին: Նա հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թվականի հոկտեմբրի 1-ի թիվ 165 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am): Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ էլեկտրոնային տարբերակով չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ գլխավոր ճարատարագետ՝ Սերգեյ Առստամյանին:

Զեկույց (Սերգեյ Առստամյան) - Հարգելի հանրային լսման մասնակիցներ, հանրային քննարկման վարողը արդեն ներկայացրեց հանքի վերաբեյալ: Այս փուլի համար նախատեսվող բոլոր փաստաթղթերն պատրաստ են: Մնում է հանրային լուսումներն անցկացվեն և տրվի համաձայնություն մեր գործունեությունն իրականացնելու համար:

Հարց (Գոռ Թադևոսյան) - Որտե՞ղ է գտնվում տարածքը:

Պատասխան (Արարատ Կարապետյան) – Տարածքը անձնական տարածք է, որը գտնվում է Սյունիք բնակավայրում: Մենք ցանկանում են այնտեղ զարգացնել հանքաարդյունաբերությունը:

Խոսք (Սերգեյ Առստամյան) – Հանքից ստացված արդյունքը դառնալու է ավազ, խիճ, որը օգտագործվելու է Կապանի տարածաշրջանում՝ ասֆալտի, ավազի և խիճի տեսքով: Մեր տարածաշրջանի համար կարևոր հանք է լինելու, որը օժանդակելու է մեր Կապանի տարածաշրջանի զարգացմանը:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ կարևոր է, որ գործունեությունը նաև նախատեսի սոցիալական և տնտեսական ծրագրերի իրականացում և նաև ապագայում կշեշտենք համայնքի հանդեպ ստացած սոցիալական ծրագրերի և պարտավորությունների չափը:

Խոսք (Արարատ Կարապետյան) - Մենք դա անպայման կատարելու ենք:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Եթե կան հարցեր՝ կարող եք բարձրաձայնել, որպեսզի շահագործող ընկերությունը պատասխանի հարցերին: Եթե չկան հարցեր, հանրային քննարկման նախնական փուլն համարենք փակված, մյուս հանրային քննարկումներն կկատարվեն ըստ օրենքի:

<u>Հանրային քննարկման պատասխանատու</u>
Կապան համայնքի ղեկավարի առաջին տեղեկալ **Գոռ Թադևոսյան**

<u>Ձեռնարկող՝</u>
«Կապանի ՃՇՇ» ՍՊԸ տնօրեն **Արարատ Կարապետյան**

<u>Հանրային քննարկման վարող՝</u>
Կապան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Հանրային քննարկման արձանագրող՝</u>
Կապանի համայնքապետարանի
տնտ" զարգ" և արտ" կապերի բաժնի
առաջատար մասնագետ **Աննա Սարգսյան**